Պարոն/Տիկին Գ. Չիլինգարյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Մեսրոպյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ. Մեսրոպյան

«18» 05 2026թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Գործուղվող անձանց անունը, ազգանունը՝

- Սերգեյ Աղինյան,
- Գարիկ Չիլինգարյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

- հանձնաժողովի անդամ,
- հանձնաժողովի նախագահի խորհրդական,

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ 2026 թվականի ապրիլի 27-28-ը, Սլովակիայի Բրատիսլավա քաղաք:

4. Հրավիրող կողմը՝ Էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիա (ERRA) և Սլովակիայի ցանցային ոլորտները կարգավորող մարմին (URSO):

5. Գործուղման նպատակը՝ Մասնակցել ERRA-ի 23-րդ տարեկան համաժողովին, կազմակերպության ընդհանուր ժողովի տարեկան նիստին, ինչպես նաև անցկացնել երկկողմ հանդիպումներ եվրոպական կարգավորող մարմինների ներկայացուցիչների հետ՝ հետ համագործակցության հնարավորությունների քննարկման նպատակով:

6. Քննարկված թեմաները՝ ERRA-ի տարեկան համաժողովը համախմբել էր ազգային կարգավորող մարմինների ներկայացուցիչների, էներգետիկ ընկերությունների ղեկավարների, ներդրողների, միջազգային խորհրդատուների և ակադեմիական

շրջանակների ներկայացուցիչների՝ էներգետիկ շուկաների զարգացման արդիական միտումների շուրջ բարձր մակարդակի քննարկումների նպատակով:

Համաժողովի ընթացքում քննարկվել են էլեկտրաէներգետիկական շուկաների ազատականացման, էներգետիկ անվտանգության, վերականգնվող էներգետիկայի ինտեգրման, ցանցային ճկունության, կուտակիչ տեխնոլոգիաների, տարածաշրջանային համագործակցության, ներդրումային միջավայրի բարելավման և կարգավորող մարմինների դերի ուժեղացման հետ կապված հարցեր:

Հատուկ ուշադրություն է դարձվել էներգետիկ փոխակերպման պայմաններում կարգավորողների առջև ծառացած մարտահրավերներին, այդ թվում՝ սակագնային քաղաքականության, շուկայի հավասարակշռման, սպառողների պաշտպանության և ներդրումների խթանման հարցերին:

Համաժողովի շրջանակում կայացել են նաև մի շարք երկկողմ հանդիպումներ եվրոպական կարգավորող մարմինների ղեկավարների և ներկայացուցիչների հետ:

Մասնավորապես, հանդիպում է տեղի ունեցել Սլովակիայի ցանցային ոլորտները կարգավորող մարմնի (URSO) նախագահ Յոզեֆ Հոյենչիկի և նրա թիմի հետ: Քննարկվել են Հայաստանի և Սլովակիայի կարգավորող մարմինների միջև համագործակցության խորացման հնարավորությունները՝ հատկապես էլեկտրաէներգետիկայի և ջրային ոլորտների կարգավորման ուղղություններով: Սլովակյան կողմը պատրաստակամություն է հայտնել աջակցել և կիսվել իր փորձով նշված ոլորտներում:

Հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հայկական կողմը կձևավորի առաջնահերթ ուղղությունները և կներկայացնի առավել կոնկրետ առաջարկներ ու աջակցության հնարավոր կարիքներ՝ հետագա համագործակցության կազմակերպման նպատակով:

Համաժողովի ընթացքում հանդիպումներ են կայացել նաև Իսրայելի էլեկտրաէներգիայի կարգավորող մարմնի (IEA) նախագահ Ամիր Շավիթի, Հունաստանի կարգավորող մարմնի նախագահ և WAREG-ի փոխնախագահ Կոնստանտինոս Ցիմարասի, Հունգարիայի կարգավորող մարմնի նախագահ՝ դոկտոր Էդիթ Յուհասի և Ռազմավարական և միջազգային հարցերով փոխնախագահ՝ Փալ Սագվարի հետ:

Քննարկվել են կարգավորող մարմինների միջև համագործակցության, փորձի փոխանակման, տարածաշրջանային ինտեգրման, WAREG-ի շրջանակներում

համագործակցության և եվրոպական էներգետիկ կառույցների հետ Հայաստանի հետագա փոխգործակցության հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները՝ Երկկողմ հանդիպման շրջանակում հանձնաժողովը նույնպես ներկայացրել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անկախության ամրապնդման, վերականգնվող էներգետիկայի ինտեգրման, կուտակիչ տեխնոլոգիաների, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման վերաբերյալ մեր մոտեցումները:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները՝ Հանդիպման ընթացքում կայացած արդյունավետ քննարկումները և ձեռք բերված պայմանավորվածությունները հաշվի առնելով՝ առաջարկում ենք շարունակել համագործակցությունը ինչպես ERRA-ի շրջանակներում, այնպես էլ երկկողմ ձևաչափով՝ ձեռք բերված պայմանավորվածությունների շրջանակներում:

Միաժամանակ, հաշվի առնելով ԵՄ համապատասխան աջակցության գործիքի միջոցով կազմակերպվող TWINNING, TAIEX ծրագրերի հնարավորությունը՝ ուսումնասիրել երկկողմ ձևաչափով վերոնշյալ ծրագրերի կազմակերպման հնարավորությունը:

Գործուղվող ---------- 18.05.2026 ---------- ***Ս. Աղինյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 18.05.2026 ---------- ***Գ. Չիլինգարյան***

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը **Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով**

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 202-ՀՆ, 16.03.2026թ**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի նախագահ՝ **Մեսրոպ Մեսրոպյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Սերգեյ Աղինյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովինախագահի խորհրդական՝ **Գարիկ Չիլինգարյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Բրատիսլավա /Սլովակիա/**

5. Գործուղման ժամկետները **26.04.2026-29.04.2026 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Մեսրոպ Մեսրոպյան	Սերգեյ Աղինյան	Գարիկ Չիլինգարյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)	7,477.47	7,477.47	7,477.47	22.432
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	229,902.36	229,902.36	229,902.36	689.707
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (եվրո՝)	112	112	112	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	48,654	48,654	48,654	
	Օրերի քանակը	3	3	3	
	Ընդամենը (դրամ)	145,962	145,962	145,962	437.886
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (եվրո)	68	68	68	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	29,530	29,530	29,530	
	Օրերի քանակը	4	4	4	
	Ընդամենը (դրամ)	118,121	118,121	118,121	354.363
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				-
	Այլ ծախսեր (Ճանապարհածախս)		22,034		22.034
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		501.463	523.497	501.463	1,526.423

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ

12.05.2026թ.